ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ մայիսի 6-ի ՆՀ-728 հրմանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 40 որոշմամբ հաստատված ,,Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգ,,-ի 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության վարչության գլխավոր մասնագետ/, Արմեն Գրիգորյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի անվանացանկի և գրանցամատյանի վարման վարչության գլխավոր մասնագետ/՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ներկայացուցիչներ, Աշոտ Մելքոնյան /մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության պետ/, Արմեն Զոհրաբյան /մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ/՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, Լաուրա Մերթարչյան / Գավառի N 7 միջնակարգ դպրոցի տնօրեն/, Հրաչիկ Ասատրյան /Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն/՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Ատեստավորման հանձնաժողովի նախագահ նշանակել Մ. Եղիազարյանին, քարտուղար՝ Ա. Գրիգորյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված ատեստավորման ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ